

Ռ. Վ. ՄԵԼԻՔՍԵՅԱՆ

ԱՂԱՎՆԱԾՈՐԻ ՍԱՐԱՎԱՆԴԻ ԵՎ ՆՐԱ ԳԼԱՔԱՐԱՅԻՆ ՇԵՐՏԻ
ԱՌԱՋԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Քուռ-Արաքսյան միջագետքի տարրեր շրջաններում հանդես են գալիս գլաքարերից կազմված բավականին հզոր ծածկոցներ, որոնք հանդիսանում են մինչև շրջապատող ջրադրական ցանցի մնացորդներ։ Գլաքարային այդ շերտերը, որոնց հաստությունը առանձին տեղերում հասնում է մեկ տասնյակ մետրի (մինչև 10 մետրի) [6] ծածկում են այն թեք բարձրադիր դարավանդները, որոնք գտնվում են միջլեռնային գոգավորությունների (Արարատյան, միջին Արփայի, Շիրակի, Նախիջևանի) եզրային շրջաններում։

Ներկա հոդվածի նպատակն է տալ սարավանդներից մեկի՝ միջին Արփայի գոգահովտում գտնվող Աղավնաձորի թեք սարավանդի և այն ծածկող գլաքարերի առաջացման վերաբերյալ նոր տվյալներ՝ 1963 թ. մեր կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա։

Աղավնաձորի սարավանդը փռված է Արփա գետի աջ ափին, Աղավնաձոր-Ռինդ-Էլփին-Արենի գյուղերի միջև։ Նա շեղանկյունաձև տարածվում է քարակատար ժայռոտ լեռնազանգվածի հարավում և գառիթափ լանջերով կտրվում է Քարափորձի անտեցեղենտ հովտով, որը նրա համեմատությամբ խորն է 120—180 մ, ըստ որում սարավանդի և Արփայի հունի միջև եղած տարբերությունը մեծանում է հոսանքն ի վեր։ Գլաքարերով ծածկված այդ սարավանդը շարունակվում է դեպի արևելք, հասնելով Ողեգիս գետի հովիտը, որտեղ գլաքարային սարավանդի արևելյան հատվածի և նրան արևելքից պարփակող Ողեգիս գետի հունի միջև եղած տարբերությունը 280 մ. է։

Նկատելի է Աղավնաձորի գլաքարային սարավանդի ընդհանուր թեքությունը արևելքից արևմուտք և հյուսիսից՝ հարավ։


Սարավանդը Աղավնաձոր գետով բաժանվում է երկու անհավասար եռանկյունների, որոնց միկրոռելեֆը փոքր ինչ տարբեր է։ Արևելյան «եռանկյունին» կամ բուն Աղավնաձորի սարավանդն իրենից ներկայացնում է դեպի հարավ թեքված, թույլ ալիքավոր մակերևույթ ունեցող մի հարթություն, որի բարձակ բարձրությունը տատանվում է 1200 մ-ից (հարավում) մինչև 1500 մ (հյուսիսում), զբաղեցնելով մոտ 12 կմ² մակերես։ Երեք կողմից այն շրջափակված է գառիթափ լանջեր ունեցող Արփա, Աղավնաձոր և Թափառու գետերի հովիտներով։

Արևմտյան «եռանկյունին», որը գտնվում է Աղավնաձոր, Էլփին, Արենի գյուղերի միջև, 100—120 մ. բարձր է բուն Աղավնաձորի սարավանդից և վերջինից տարրերով է իր թմբա-բլրային ռելեֆով, որն ինտենսիվ էրոզիայի


արդունք է: Այս սարավանդի գլաքարային շերտի մեծ մասը կազմված է միջին էոցենի [2] նստվածքային փխրուն ապարներից (մերգելներից, կավերից, մասամբ խառնված տուֆոգնե գոյացումների հետ): Ահա այդ ապարների վրա զարգացած բլրա-խանդակային մակերևույթն իրենից ներկայացնում է ունեֆի բեղլենդային տիպը [8]: Նման բեղլենդներ զարգացած են նաև Աղավնաձորի սարավանդի հարավ-արևելքում՝ Արփա, Եղեգիս և Թափառու գետահովիտների լանջերին, ուր նույնպես մերկանում են միջին էոցենի նստվածքային-հրաբխածին ապարները [8]:

Աղավնաձորի թեք սարավանդը էլփին գետից մինչև Եղեգիս գետն ընկած հատվածում իրենից ներկայացնում է պլիոցենյան հասակի պալեո-Արփայի գոգհովտի վեր քարձրացած հատակի մի հատված: Գեոմորֆոլոգիական դիտումները ցույց են տալիս, որ նրա զգալի մասը դուրս է մնացել Արփայի ոլորտից, որը հաստատվում է գետային էրոզիայի և ալյուվիալ նստվածքների բացակայությամբ: Արփայի հովտի այդ հատվածը գլաքարերի գոյացման շրջանում եղել է այնպիսի մի գոգհովիտ, ինչպիսին այժմ նկատելի է Արաքսի հովտի այն մասում, որը գտնվում է Նախիջևանի ԱՍՍՌ. Օրդուբադի շրջանում:

Այդ ընդարձակ հին հովտի շարունակությունը դեպի արևելք հանդիսանում է Գլաձորի հարթ սարավանդը, համանուն գյուղի շրջանում, որը զուրկ է գլաքարային ծածկոցից: Աղավնաձորի սարավանդի և նրան հարակից փոքր տարածություններ բոնող մյուս սարավանդների մակերևույթները ծածկված են գլաքարային շերտով, որի հաստությունը տատանվում է 1—2-ից մինչև 8—10



Նկ. 1. Աղավնաձորի սարավանդի և նրա կից հատվածների լայնակի կտրվածքը:



Նկ. 2. Աղավնաձորի սարավանդի և նրա կից հատվածների երկայնակի կտրվածքը:

մետր (նկ. 1 և 2): Այդ շերտը կազմված է տարբեր մեծության (մի քանիսմ-ից մինչև 60—65 սմ տրամագծով) գլաքարերից, որոնց հետ խառնված է մանրախիճ, ավաղ և կավ: Շերտախումբում հատ ու կենտ հանդիպում են մինչև 1—1,2 մ տրամագիծ ունեցող հսկա գլաքարեր: Վերջիններիս պետրոգրաֆիական կազմը համեմատաբար միատարր է [5]:

Ըստ Ա. Հ. Գարրիելյանի, նրանք հիմնականում կազմված են էֆուզիվ ապարներից (անդեզիտներ, անդեզիտադացիտներ, դացիտներ, անդեզիտաբազալտներ, բազալտներ, լիպարիտա-դացիտներ): Հազվադեպ հանդիպում են նաև նստվածքային ապարներից կազմված գլաբարեր: Գլաբարերը հիմնականում կլորացված են, բայց հանդիպում են նաև կիսակլորացած գլաբարեր և խոշոր քարաբեկորներ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ այստեղ բացակայում է գլաբարերի և նրան խառնված ավաղի ու կավի շերտադրույթյուն, որի հետևանքով բացառվում է այդ նստվածքների ալյուվիալ ծագումը: Գլաբարերի ալյուվիալ ծագումը բացառում են համարյա բոլոր հետազոտողները: Բնականորեն հարց է առաջանում, իսկ ինչպիսի ծագում կարող է ունենալ այդ հզոր շերտախումբը, որը այնուամենայնիվ կուտակվել է հոսող ջրերի շնորհիվ: Այլ ճանապարհով տեղափոխված և կուտակված քարաբեկորները դժվար թե վեր ածվեն կլորացած կամ կիսակլորացած գլաբարերի: Հետազոտողների մի մասը գտնում է, որ այդ գլաբարերն ունեն ջրասառցադաշտային ծագում և դոյացել են գլունցի և գլունց-մինդելի ժամանակաշրջանում: Նրանց ջրասառցադաշտային ծագումը պաշտպանում են Կ. Ն. Պաֆֆենհոլցը [2], Ա. Տ. Ասլանյանը և Ս. Պ. Բալյանը [4]: Ա. Հ. Գարրիելյանը [5] գտնում է, որ այս գլաբարերն այստեղ կուտակվել են Գեղամա լեռնաշղթան պլեյստոցենում ծածկված սառցադաշտերի հալվելու հետևանքով, հրք սառցահալքից գոյացել են հզոր ջրահոսքեր: Այդ նույն կարծիքին է նաև Ն. Վ. Դումիտրաշկոն, բայց նա դրանց առաջացումը պայմանավորում է մի քանի գործոնների կոմպլեքսով, այն համարելով ջրասառցադաշտային-գետային-հեղեղատային կուտակում, դոյացած Ափշերոնում—ստորին պլեյստոցենում [7]:

Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Ն. Վ. Շանցերը [9], ճիշտ չի այն տեսակետը, որ ջրասառցադաշտային նստվածքներ կարող են առաջացնել այն բոլոր գետերը, որոնք սնվում են սառցադաշտերից: Ներկայումս բազմաթիվ գետեր երկրագնդի մի շարք բարձրադիր լեռնային շրջաններում սկիզբ են առնում սառցադաշտերից և կլիմայական փոփոխությունների (տաքացման) հետևանքով սառցադաշտային լեզվակները առաջացնում են հզոր հեղեղատներ, որոնք իրենց հետ քշելով հողմնահարված ապարները նստեցնում են գետի տարրեր հատվածներում, ընդհուպ մինչև գետաբերանը: Սակայն այդ նրստվածքները ջրասառցադաշտային անվանել չի կարելի, քանի որ յուրաքանչյուր գետի և մասնավորապես լեռնային գետերի գետաբերուկները գետի մեջ մուտք են գործում ոչ միայն վերոհիշյալ ճանապարհով, այլև բազմաթիվ այլ ճանապարհներով և պատկանում են ծագման տարրեր տիպերի՝ դելյուվիալ, էլյուվիալ, սողանքային, ցրոնային և այլն, որոնք հետադայում վերամշակվում են գետի կողմից, վերածվելով գլաբարերի, ավաղի, կավի, նստելով հովտի հատակին որպես ալյուվիալ նստվածքներ [3]: Մյուս կողմից ջրասառցադաշտային նստվածքները հիմնականում հանդես են գալիս սառցադաշտին կից շրջանում (զանդրային դաշտ), իսկ Աղափնածորի և նրա մյուս սարավանդերը բավականին հեռու են չորրորդական սառցադաշտերի տարածման շրջանից: Այսպիսով, այդ գլաբարերի առաջացումը չպետք է համարել ջրասառցադաշտային:

Աղափնածորի շրջանի գլաբարային շերտի գոյացումը, մեր կարծիքով, պայմանավորված է հիմնականում այն հզոր հեղեղներով ու սելավներով, որոնք սկիզբ առնելով Գեղամա բարձրավանդակի հարավային հատվածը կազմող Քարակատար լեռնաշղթայի հարավային լանջերին, լվացել և տեղատարել են

վիայի արտածման կոնկրետ վերջիններս միաձուլվելով իրար, Բարակաուար լեռնազանգվածի ստորոտում ստեղծել են ստորոտային շրջիֆ:

Հետադայում նորագույն տեկտոնական շարժումների միջոցով Արփայի հունի իջեցման և կից լանջերի բարձրացման շնորհիվ, իջնում է Արփայի վերահիշյալ աջափնյա վտակների էրոզիայի բաղիսը՝ Արփա գետը, պատճառ դառնալով այդ պրոյուկիայի շրջիֆի հետագա մասնատմանը: Շրջիֆի առանձին հատվածները սլահպանվել են մինչև օրս բարձրագիր թեք սարավանդների ձևով:

ՀՍՍՌ ԳԱ

Ընդունված է 5.IX.1964.

Ներհարանական գիտությունների ինստիտուտ

Ախալաղագույրյան սեկտոր

Р. В. МЕЛИКСЕТЯН

ОБ ОБРАЗОВАНИИ АХАВНАДЗОРСКОГО ПЛАТО И ЕГО ГАЛЕЧНОГО ПОКРОВА

Р е з ю м е

В бассейне среднего течения реки Арпа расположено Ахавнадзорское плато, покрытое толщей галечников, мощностью от 1 до 10 м.

По данным некоторых авторов (К. Н. Паффенгольц, А. А. Габриелян, А. Т. Асланян, С. П. Бальян и др.), эти галечники имеют флювиогляциальное происхождение. На основании подробного ознакомления с этими галечниками во время полевых работ в 1963 г, автор пришел к выводу, что толща галечников Ахавнадзорского плато имеет пролювиальное происхождение и возникла при мощных паводках и селях, которые образовавшись после обильных атмосферных осадков на южных склонах Каракатарского хребта (в южной части Гегамского нагорья), размывали и денудировали слагающие этот хребет вулканогенно-пролювиальные толщи плиоцена и палеогена. Некоторые водотоки, протекавшие из этих гор (Палео-Эльпин, Палео-Ахавнадзор, Палео-Тапару и Палео-Элегис) в правобережной части дна долины Палео-Арпа создали свои крупные пролювиальные конусы выноса, которые сливаясь образовали шлейф подножья. Впоследствии этот шлейф расчленялся на отдельные сегменты, фрагменты которых сохраняются в виде отдельных небольших плато.

Л И Т Е Р А Т У Р А

1. Գաբրիելյան Ա. Հ., Հասարայան Վ. Պ., Ասատույան Հ. Ա. Արևմտյան Վայրի «Դարալսգյազի» գեոմորֆոլոգիայի հարցի շուրջը: Հայկական ՍՍՌ ԳԱ տեղեկագիր, բնական գիտությունների № 1, 1947.
2. Պալիֆենկույց Կ. Ն. Հայաստանի և Փոքր Կովկասի նրա կից մասերի գեոլոգիական ակնարկը: ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1946.
3. Абрамян Г. С. К вопросу о флювиогляциальных отложениях Армянской ССР. Изв. АН Арм. ССР, геологические и географические науки, т. XV, № 6, 1962.
4. Асланян А. Т. и Бальян С. П. Следы древнечетвертичного оледенения в Армении. Бюлл. МОИП, отд. геол., т. 28, № 6, 1953.
5. Габриелян А. А. К вопросу о происхождении постплиоценовых галечников южной Армении. ДАН Арм. ССР, т. IV, № 2, 1946.

6. Габриелян А. А. О возрасте древних галечников Армении и о нижней границе антропогена. ДАН Арм. ССР, т. XXVII, № 2, 1958.
7. Думитрашко Н. В. Основные черты рельефа и геоморфологическое районирование Армении. Тр. Ин-та географ. АН СССР, вып. 74, Мат. по геоморф. и палеогеогр. СССР, 18, 1958.
8. Зограбян Л. Н. Айоцзорский район. Геология Армянской ССР, т. I, Геоморфология, изд. АН Арм. ССР, 1962.
9. Шанцер Е. В. К изучению о фациях континентальных осадочных образований. Бюллетень по изучению четвертичного периода, № 13, 1948.